

Դեկտեմբեր ամսվա տոնացույց

1. Դեկտեմբերի 21-ին Բարեգործական երեկո «Մեր եկեղեցին մեր երեխաների» համար խորագրով: Սկիզբը ժամը 18:00, հրավիրում ենք բոլորին:
2. Դեկտեմբերի 21-ին Ձմեռ պապին շնորհավորում է բոլորին Նոր Տարվա կապակցությամբ Մոսկվայում: Սկիզբը 18:30, Կուրիայի դահլիճ, հրավիրում ենք ձեր երեխաների հետ:
3. Դեկտեմբերի 24-ին Ճրագալույցի փառավոր Սուրբ Ծննդյան Պատարագ: Ժամը 15:00
4. Դեկտեմբերի 25 Շնորհավոր Սուրբ Ծնունդ Հիսուս Քրիստոսի: Ծննդյան փառավոր Սուրբ Պատարագ: Սկիզբը 15:30: Տեղի կունենա Ջրօրհնեքին Հիսուսի քավորի վիճակահանություն:
5. Դեկտեմբերի 31 նախատոնական սուրբ պատարագ: Սկիզբը՝ ժամը 13:00
6. Հունվարի 1-ին ս.Պատարագ, Տոն տնօրինության Հիսուսի: Սկիզբը՝ ժամը 13:00
7. Հունվարի 6-ին Ջրօրհնեք, Ձայնավոր ս.Պատարագ՝ ժամը 13:00:
8. Հունվարի 7-ին մեռելոց Պատարագ և պաշտոն հանգստի՝ ժամը 13:00:
9. Ծննդյան և Ամանորյա տոների շրջանը տնօրինեքի ժամանակաշրջան է: Ցանկացողները դիմեն վարդապետին:

Խմբագրումը և ձևավորումը՝ Վարդուհի Ասատրյանի

Մեր հասցեն՝ ր. Москва, ул. Малая Грузинская д. 19/2

Հեռախոսներ՝

+7 (965) 258 68 41(Վ. Ասատրյան)

+ 7(926) 904 91 49 (Հայր Պետրոս Ծայրագույն Վարդապետ Պետրոսյան)

E-mail - am.armcatholik@mail.ru, anusharts@mail.ru, ppetros@libero.it

<http://armcatholik.ru>



ԿՈՉՆԱԿ 3.2

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈ



ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սրբերի հիշատակություն

Ս. Ստեփանոս Նախավկայի և առաջին մարտիրոսի
հիշատակության օր 26.12.14թ.

Ժողովարանում շատերն էին փորձում վիճել նրա հետ, բայց նրա իմաստությունը ոչ ոք չունեւ։ Ուստի չարակամները համոզում են որոշ մարդկանց ասել, թե Ստեփանոսը հայհոյում է Աստծուն և Ս. Մովսես մարգարեին։ Գրգռելով ժողովրդին, քահանաներին և օրենսգետներին՝ նրան ատյան են տանում։ Ս. Ստեփանոսն իր պաշտպանական ճառով ապացուցում է ներկաներին, որ Հիսուս է խոստացյալ Մեսիան, իսկ հրեաներին հանդիմանում է իրենց խստասրտության համար։ Նրան քաղաքից դուրս քարկոծում են, զգեստները դնում Սավուղ անունով մի երիտասարդի առջև։ Սավուղը Ս. Պողոս առաքյալն էր, ով սկզբում հալածում էր քրիստոնյաներին։ Նա ճանաչեց ճշմարիտ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին՝ հետագայում դառնալով Ավետարանի ամենաեռանդուն քարոզիչը։ Ս. Ստեփանոսը դարձավ Քրիստոսի համար նահատակված առաջին վկան ու մարտիրոսը և այդ պատճառով կոչվեց ՆԱԽԱՎԿԱ։ Ըստ ավանդության՝ Ս. Պողոս առաքյալի ուսուցիչ Գամաղիելը և նրա եղբայր Նիկողեմոսը, ովքեր Հիսուսի ծածուկ աշակերտներից էին, սրբի մարմինը թաղել են իրենց ագարակում։ Շատ չանցած Ս. Ստեփանոսի նշխարները հայտնաբերել է Ղուկիանոս անունով մի երեց, և Երուսաղեմի Հովհանն հայրապետը դրանք դրել է Սիոնում։ 5-րդ դարում Հուլիանե իշխանուհին Երուսաղեմում հայտնաբերել է սրբի տապանակը, տարել Կ.Պոլիս, հետագայում բերել Վենետիկ՝ ամփոփելով Ս. Գևորգ կղզու մայր եկեղեցում։ Ս. Ստեփանոս նախասարկավագն իր աներեր հավատով, սրբակենցաղությամբ, նվիրումով, ծառայասիրությամբ և մյուս առաքինություններով օրինակ է քրիստոնյաների համար՝ ճշմարտությունը ճանաչելու և Տիրոջ քաղցրությունը ճաշակելու համար։

<http://www.araratian-tem.am/>

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եբրայեցիներ 4, 16-5, 10

¹⁶Քանզի ոչ թե ունենք մի քահանայապետ, որ կարող չլինի չարչարակից լինել մեր տկարութեանը, այլ՝ մի Քահանայապետ, որ մեզ նման փորձուած է ամեն ինչում, բայց առանց մեղքի է։ ¹⁷Ուրեմն, համարձակութեամբ մօտենանք նրա շնորհի աթոռին, որպէսզի ողորմութիւն ստանանք եւ շնորհ գտնենք այն ժամանակ, երբ օգնութեան կարիք ունենք։

5 Ամեն մի քահանայապետ, մարդկանց միջից ընտրուելով, պաշտօն ունի մարդկանց կողմից Աստծու հետ յարաբերութեան մէջ լինելու, որպէսզի ընծաներ եւ զոհեր մատուցի մեղքերի համար։ ²Նա որոշ չափով միայն կարող է չարչարակից լինել տգէտներին եւ մոլորուածներին, քանի որ ինքն էլ տկարութեամբ պատած մարդ է։ ³Պրա համար պէտք է, որ նա, ինչպէս ժողովրդի, այնպէս էլ իր համար ընծաներ մատուցի մեղքերի համար։ ⁴Եւ որեւէ մէկը ոչ թէ ինքն իրենից է առնում այս պատիւը, այլ առնում է նա, ով Աստծուց է կանչուած, ինչպէս որ՝ Ահարոնը։ ⁵Նոյնպէս եւ Քրիստոս ոչ թէ ինքն իրեն մեծարեց քահանայապետ դառնալու համար, այլ նա, ով նրան ասաց։ ⁶Ինչպէս որ մի ուրիշ տեղ էլ ասում է։ ⁷Նա էր, որ մարմնի մէջ եղած իր օրերում աղօթքներ եւ պաղատանքներ էր մատուցում ուժգին գոչումով եւ արտասուքներով նրան, ով կարող էր փրկել իրեն մահուանից։ Եւ նա լսելի եղաւ իր բարեպաշտութեան համար։ ⁸Թէպէտեւ Որդի էր, բայց իր

չարչարանքների միջոցով հնազանդութիւն սովորեց.⁹ Եւ կատարեալ դառնալով՝ բոլոր իրեն հնազանդուողներին

յաւիտենական փրկութեան պատճառ դարձաւ¹⁰ Եւ Աստծուց անուանուեց յաւիտեանների Քահանայապետ, ըստ Մելքիսեդեկի կարգի:

Ղուկասի Ավետարան 18, 9-14


⁹Այս առակն էլ ասաց ոմանց, որոնք իրենք իրենցով պարծենում էին, թէ արդար են, եւ արհամարհում էին ուրիշ շատերին: ¹⁰«Երկու մարդ տաճար ելան աղօթքի կանգնելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: ¹¹Փարիսեցին կանգնած էր մեկուսի եւ, ինքն իրեն, այս աղօթքն էր ասում. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզնից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպէս՝ յափշտակողները, անիրաւներն ու շնացողները, եւ կամ ինչպէս այս մաքսաւորը. ¹²այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում եւ տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից»: ¹³Իսկ մաքսաւորը կանգնած էր մեկուսի եւ չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում էր կուրծքը եւ ասում. «Աստուած, ների՛ր ինձ՝ մեղաւորիս»: ¹⁴Ասում եմ ձեզ, սա՛ իջաւ իր տունը արդարացած, ոչ թէ միւսը. որովհետեւ, ով որ բարձրացնում է իր անձը, կը խոնարհուի, եւ ով որ խոնարհեցնում է իր անձը, կը բարձրացուի»:



Սրբերի հիշատակություն

Ս. Ստեփանոս Նախավկայի և առաջին մարտիրոսի
հիշատակության օր 26.12.14թ.

Ս. Ստեփանոսն Ընդհանրական Եկեղեցու ամենասիրված սրբերից է, Քրիստոսի սիրո վարդապետության համար նահատակված առաջին մարտիրոսը: Վարքագրական աղբյուրների համաձայն՝ նա սերում էր Հուդայի թագավորական զարմից, Քրիստոս Աստծո ցեղակիցն ու օրինապահ ծնողների զավակն էր: Դեռ պատանի՝ Կայիափա քահանայապետի ծառան էր: Տիրոջը տուն տանելիս Ս. Ստեփանոսը գլխի վարշամակը փռում է Երկնավոր Վարդապետի ոտքերի տակ՝ արտահայտելով իր անդավաճան ու անկեղծ սերը: Այս ամենը զայրացնում է քահանայապետին, ով նրան դուրս է վռնդում: Նա ականատես է լինում Տիրոջ մահվանն ու թաղմանը, բայց վերստին ուրախանում է առաքյալների հետ Աստվածորդու հրաշափառ հարությամբ: Ըստ Հայ Եկեղեցու եռամեծ վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացու՝ նա գնում է Ս. Պետրոս և Ս. Հովհաննես առաքյալների մոտ, մկրտվում: Մկրտության պահին ջրի վրա երևում է լուսապսակ: Այդ զարմանահրաշ դեպքից հետո նրան անվանում են «Ստեփանոս», որ նշանակում է պսակավոր: «Գործք առաքելոց» գրքից հայտնի է, որ Հոգեգալստից հետո առաքյալները սեղաններն էին սպասարկում, կարիքավորներին նպաստներ բաշխում: Եվ օրեցօր Հիսուսին հավատացողների թիվն ավելանում էր: Քանի որ առաքյալներն ի վիճակի չէին հոգալ բոլորի կարիքները, ուստի իրենց հետևորդներին պատվիրում են, որ բարի համբավ ունեցող յոթ մարդ ընտրեն՝ սեղաններն սպասարկելու համար: Ըստ Ս. Ղուկաս Ավետարանչի՝ ընտրյալների մեջ էր նաև Ս. Ստեփանոսը, ով «հավատով և Սուրբ Հոգով լցված մի մարդ էր» (Գործք. 6:5): Սուրբ առաքյալները Քրիստոսից ստացած իշխանությամբ ձեռնադրում են նրանց՝ արժանացնելով սարկավազի պատասխանատու աստիճանի: Իսկ Ս. Ստեփանոսն Աստծուց տրված շնորհներով և զորությամբ զանազան հրաշքներ էր գործում ժողովրդի մեջ:



Փարիսէցու աղոթքը

Փառք քեզ, Աստված, հազար գոհություն սուրբ անվանդ.
աշխարհը լիքն է անիրավ մարդկանցով. փառք քեզ, որ ես նրանց նման
չեմ:

Ինքն իրեն հավանող պարծենկոտը զոջում չունի, միայն կեղևն է փալյուն, իսկ միջուկը՝ փտած: Աստված արտաքինը չի ընդունում, այլ սրտին է նայում:

Ավելի մեծ մեղք չկա, քան հպարտությունը, որովհետև իր հետ շղթայված մեծի բոլոր մեծամեծ մոլությունները: Քանի որ հպարտը չի կամենում, որ այլ մեկն իրենից բարձր լինի, այդ պատճառով էլ նախանձոտ է լինում, և չտանելով ուրիշների հաջողությունները՝ բարկությամբ է վառվում, չկարողանալով նրանց հաջողություններին արգելք լինել՝ հուսալքվում ու ծուլության մեջ է ընկնում: Իսկ քանի որ ծույլն այլևս չափելու հույս չունի, դառնում է ագահ: Ագահությամբ ձեռք բերված դրամը գրգռում է նրան ուտել-խմելու, և նա որկրամոլ է դառնում: Եվ բազում կերակուրներից ու ըմպելիքներից բորբոքվում է ցանկության ախտը, և նա դառնում է քղջախոհ:

Ուրեմն՝ հպարտությունն է բոլոր գլխավոր մոլությունների մայրն ու դայակը, նրանից են առաջ գալիս մեղքերի անթվելի ծնունդները, որոնցից մեկն իսկ բավական է մարդուն կորստյան հասցնելու:

Հայարտները հանձն չեն առնում խոստովանել, թե հպարտ են: չեն զգում իրենց հպարտանալը, որովհետև մտքով կույր են: Եթե միտքը կույր է և կամքին չի առաջնորդում անխոտոր ընթանալու, կամքն ըստ իր կամենալու սահում է ամեն տեսակ վտանգի մեջ, որովհետև չի կարողանում վայելն ընտրել:

Աստված յուրաքանչյուրին փոխարենը հատուցում է ըստ նրա հոգաբարձության, բաղձանքի ու ջանքի:

Մաքսավորի աղոթքը

Աստված, մեղավոր եմ, ներիր ինձ:

Զգում էր, որ մեղանչել է Աստծու դեմ, Նրա շնորհներին անարժան է, բայց մտածելով որ Աստված ներող է և մեղավորի մահը չի ուզում, այլ սպասում է նրա գոցմանը, անկեղծ սրտով ծունկի եկած աղոթում էր.

Ինչպես որ ՀԿԱ ավելի մեծ չարիք, քան հպարտությունը, այդպես էլ ՀԿԱ ավելի մեծ բարիք, քան խոնարհությունը:

Կատարյալ խոնարհը, որքան էլ մեծամեծ շնորհներ, ունեցվածք, պատիվ ու մեծություն ունենա, իր մասին նվաստ կարծիք ունի. իր ունե

ցած առավելությունները չի տեսնում, այլ կամենում է իր թերությունները տեսնել՝ դրանք շտկելու համար, որով էլ առավել է արժանանում Աստծու շնորհներին:

Խոնարհը ոչ միայն երկարակյաց ու առողջ է լինում, այլև բոլոր ժամանակներում վնասներից ազատ է մնում: Որովհետև ոչ ոքից չի խռովում, չի տրտմում, չի հուսահատվում, չի զայրանում (որովհետև սրանք են զանազան հիվանդությունների ու մահվան պատճառները), մեկի հետ չի թշնամանում, ուստի և ոչ ոք ջանք չի թափում նրան վնասելու, և այսպես խաղաղ ու երջանիկ կյանքով է կնքում իր օրերը:

Միամտությունն առանց խորագիտության հիմարություն է, և խորագիտությունն առանց միամտության՝ խորամանկություն. միամտությունը խորագիտությամբ, և խորագիտությունը միամտությամբ խոհեմություն է. ինչպես մեր Տերն էլ աղավնու միամտությանը հարեց օձի խորագիտությունը (**Մատթ. 10, 16**), որպեսզի մարդկանց սովորեցնի երկու վնասակար ծայրերից խորշել և խոհեմության մեջ հաստատվել:

Պատվի ու համբավի պահապանը մտքի խոհեմ դատումն ու ընտրողությունն է: Կա հիվանդություն, որ դեղով է բուժվում, կա էլ, որ բուժվում է պահեցողությամբ: Կա բաղձանք, որն իրագործվելու համար ջանքի ու աշխատանքի պետք ունի, կա էլ, որ կարիքն ունի ժամանակի ու համբերության: Ուստի ով չգիտի սրանք զանազանել ու տեղին գործածել, նրա բաղձանքն ու ցանկությունը չեն իրականանում:

Ավելի հարկավոր գիտություն չկա, քան ինքնաճանաչումը: Ով ճանաչում է իրեն, ճանաչում է Աստծուն, և ով ճանաչում է Աստծուն, նաև սիրում է Նրան ու ցանկանում հաճոյանալ Նրան, որով ժամանում է կատարելության գագաթը:

«Ինչքան մեծ լինես, այնքան խոնարհեցրո՛ւ քո անձը
և շնորհ կգտնես Տիրոջ առջև» (Սիրաք Գ 20):

Ռուսաստանի հայ կաթողիկե եկեղեցու ընդհանուր
տեղապահ, Մոսկվայի հայ կաթողիկե համայնքի ժողովրդապետ
Օ.Վրդ. Հայր Պետրոս Պետրոսյան
Մոսկվա, 21 դեկտեմբերի 2014թ.

Հայոց Մեծ Յեղասպանության հարյուրամյակին ընդառաջ....

Շողերը գրկեց, հանգստացրեց ցավից դեռ մղկտացող երեխային, սեղմեց կրծքին ու նայեց երդիկից երևացող լիալուսնին. «Տե՛ր Աստված, իմ Վարդևորի երազ թուրքին բաշխես, որ իմ ցավ հասկանա»: Մինչև լույս արթուն մնաց, բայց էլի զգում էր վառված գերանների թանձր ծխահոտը:

Հովհաննեսը Կարսի որբանոցից եկավ Մեհրիբան՝ քրոջ մոտ, կարոտն առավ ու գնաց Ռուսաստան՝ Կրասնոդար: Հետո եկավ Հայաստան, Մեղրու, Ապարանի, Թալինի ու Ազիզբեկովի շրջանների դպրոցներում դիրեկտոր աշխատեց: Գրագետ էր, մատով էին ցույց տալիս Սարգսին:

1937 թվականն էր: Հովհաննեսը Դարալագյազի (Վայոց ձոր) Գնդեվազ գյուղի դպրոցի դիրեկտորն էր: Կեսօրին երեք զինված կաշվե բաճկոնավորներ դուռը շրխկացնելով մտան աշխատասենյակ:

–Հովհաննես Աբրահամի Աբրահամյան, դու թաքնված դաշնակցական ես, լրտես ու ժողովրդի թշնամի, գաղտնի կապերի մեջ ես բանաստեղծ Եղիշե Զարենցի ու կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի հետ: Վկաներով հաստատվել է, որ մի քանի ամիս առաջ, երբ Դարալագյազ է եկել Աղասի Խանջյանը, դու նրա հետ գնացել ես որսի և ընկեր Բերիայի դեմ մահափորձի ծրագրեր կազմել: Հետևիր մեզ,– կարգադրեցին ԷՆԿԱՎԵՂԵԻ ստահակները... Հովհաննեսը՝ ոտքով, իրենք ձիերին նստած՝ գնացին կենտրոն...

–Ես թուրքի սրից ու կրակից փախցրի ախպորս, բերի, ասի՝ իդա Հայաստան է, էլ թուրք չկա՛, տվեցի սովրի, գրագետ մարդ դառնա, որ աշխարհքին պատմի մեր գլխով եկածը... Գազանի բերնից փախցրի բերի, գցի անհավատ բորենու բերան,– ծնկներին զարկեց Շողերը:

Հարունակելի, աղբյուրը՝

<http://www.irates.am/hy/1399968969>

Վրեժ ՍԱՐՈՒՆԱՆՅԱՆ

ՄՇԵՑԻ ՇՈՂՈՆ (Իրական փաստերի վրա հիմնված)
սկիզբը՝ նախորդ համարում

Գաղթականների խումբը հասավ Կարս: Շողերին առաջարկեցին եղբորը թողնել ամերիկյան որբանոցում, ուր և՛ ապահով է, և՛ կրթություն կստանա:

...1922 թվականին գաղթականների մի խումբ հասավ Արագածի ստորոտի Մեհրիբան գյուղը (այժմ՝ Կաթնաղբյուր): Գաղթի ճամփի փոշին դեռ թափ չէր տվել շորերից՝ Շողերենց տուն հարսնախոսության եկան: Ամուսնացավ Սասունից գաղթած Արփի գյուղից Գրիգոր Տոնոյանի հետ: Ինը երեխա ունեցավ Շողերը, բոլորին իր ու ամուսնու սպանված հարազատների անուններով կոչեց՝ Աղավնի, Վարդուշ, Գյուլնազ, Մկրտիչ, Սարգիս, Վաչագան, Զրեղեն, Անահիտ, Շուշիկ:

Մեհրիբանում Վարդավառ էր... Երեխաներն իրար մի լավ ջրել էին, հոգնած եկել ու պառկել: Խաղաղ գիշեր էր: Վարդուշի գիշեր էր, ու Շողերի քունը չէր տանում: Բայց հանկարծ հոգնած կոպերը ծանրացան, երազում Շողերը ծխահոտ առավ, կրակի լեզվակները մոտենում էին եղբորը, ականջին հասավ հարյուրամյա մարեի ձայնը. «Երեխեքին պառկեցրե՛ք քիթուբերանին, մերերով պառկե՛ք իրենց վրեն, որ չխեղդվին...»: Երազում Շողերը ճչաց, գրկի երեխային շարտեց գետնին ու պառկեց վրան: Ամուսինը սարսափահար վեր թռավ ու Շողերին շրջեց ճչացող երեխայի վրայից. «Այ կնի՛կ, ի՞նչ էղավ բզի...»:

-Ա՛խ, ա՛խ, Մշո Վարդուշի օր դարձե թուրք ու երազում ընկե իմ հետևեն... Գրիգոր՝, Վարդուշի երազ իմ թշնամին է, թուրք է... Մինչև գերեզման չթողի, որ ես աչք կացնիմ էդ օր: Զեյվա՛խ, իմ երազ իմ թշնամին է, իմ երազ թուրք է, աշխարհ:

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Գ Ի Ր

16.12.14թ.

Մոսկվայի հայ կաթողիկե
համայնքը շնորհավորում է
սիրելի ժողովրդապետ
Ծ.Վրդ. Պետրոս Պետրոսյանին
ծննդյան տարեդարձի կապակցությամբ:
Սիրելի վարդապետ,
մաղթում ենք Ձեզ
առողջություն, հոգու կորով և
համբերություն՝ Ձեր անձայրածիր
ընտանիքին հովվություն անելու
դժվարին գործում:
Թող Աստծո փառքը միշտ
Ձեզ ուղեկից լինի:

2014Թ. ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԸ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Արդեն 7 տարի է, որ Մոսկվայում կազմակերպվում և իրականացվում է ամառային ճամբար հայ երեխաների համար: Այն մի շարք նպատակներ է հետապնդում.

- Ստեղծել պայմաններ, որտեղ երեխաները հնարավորություն կունենան շփվել հայերեն լեզվով:
- Հայ մանուկներին ծանոթացնել հայոց լեզվին, հայ մշակույթի, հայկական արվեստի ու տեսարժան վայրերի հետ:
- Հոգևոր սնունդ մատուցել մատաղ սերնդին և այլն:



Այս սուրբ գործն 2010թ. ի վեր իրականացվում է մի աստվածաշնորհ մարդու, հայ կաթողիկե եկեղեցու վարդապետ՝ հայր Պետրոսի գլխավորությամբ: 2014 թվականի հունիսի 30-ին ընդունեցինք մեր հայ

մանուկների խումբը և մեր ճամբարը կնքեցինք «Հայորդիներ» անվամբ: 26 հոգուց բաղկացած խումբը բաժանեցինք երկու ենթախմբերի (վարժերի)՝ անվանակոչելով «Նոյ» և «Արարատ»: Ճամբարային ծրագիրն իր մեջ ընդգրկում էր հայոց լեզվի և գրականության ծանոթություն, հետաքրքրաշարժ և ինտելեկտուալ խաղեր, ստեղծագործական



վարպետություն, մշակութասպորտային բազմազան միջոցառումներ:

Հենց առաջին օրվանից, նկատելով հայրենակիցներիս տաղանդավոր մտքերն ու խորիմաստ աչքերը, հայերեն լեզուն ուսումնասիրելու անսպառ ցանկությունը, իմ մեջ միտք հղացավ բեմադրելու մի ներկայացում՝ կազմված հայկական հեքիաթներից: Չնայած սեղմ ժամկետներին, պատրաստվեց մի գեղեցիկ միջոցառում: Այն սկսվում էր հայկական և ռուսական օրհներգներով, այնուհետև համեմվում՝ սուրբ աղոթքներով՝ «Հայր Մեր...» և «Առավոտ Լուսո», շարունակվելով հայրենասիրական երգերով և պարերով ավարտվեց փոքրիկ բեմականացմամբ: Այնուհետև Հայր Պետրոսի ղեկավարությամբ և ծնողների ուղեկցությամբ բացվեց մեր



ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին մեր յոթնօրյա ստեղծագործական ձեռագործ աշխատանքների արդյունքները:

Ճ ամբարային շաբաթն եզրափակվեց մրցանակաբաշխությամբ: Երեխաները պարգևատրվեցին դիպլոմներով, լավագույնները՝ խրախուսական նվերներով:

Ուրախ տրամադրությամբ, վառ տպավորություններով միմյանց հրաժեշտ տվեցինք՝ գալոռ տարի հանդիպելու ակնկալիքով:

Հեղինակ՝ 2014 թ. Մոսկվայի հայ կաթողիկե համայնքի ամառային ճամբարի կազմակերպիչ Վերա Վիկտորի Ղազարյան